

գանուէր «ի մեծ ոչրախոչրեան», թշնամիք յանկարծուստ յարձակեցան այդ զուարթ ամբոխին վրայ, «արարին կոտորած մեծ», եւ գինւոյն մտերիմ արծրունի թագաւորը գերի բռնեցին (Ուռ. 37): — Ուրիշ օրինակ մը: 1036ին՝ Գանձի իշխանը քաջութեամբ առաւ Պարսից ձեռքէն Վասպուրականի Բերկրի քաղաքը. եւ պաշարելով անոր ամրոցը՝ ծարաւով կը նեղէր թշնամին: Էւ սակայն «յայսպիսի պատերազմ», ուր մեծ զգուշութեան պէտք կար, «անհոգացեալ կային զօրքն Հայոց», կ'ըսէ պատմիչն իրաւացի զարմացմամբ, «եւ էին ի մեծ գինարբոչրեան»: Ամիրայն զրտած էր նպաստաւոր վայրկեանը. իսկոյն հաւաքեց իրենները, յարձակեցաւ ու դիտապաստ փռեց Հայոց թմրած բանակը զօրագլխով միասին (նոյն, 86): Այսպէս զոհ գնաց արբեցութեան, եւ այն՝ տկար կնոջ մը ձեռքով, զԲետիղուա պաշարող ասորական անեղազօր բանակն ալ (Յղթ. ժԲ): Բոլոր ասիացիք իրարու կը նմանէին:

Քատմնելի ճշմարտութիւն մը կայ մեր պատմութեան մէջ. Արշակունեաց հարըստութիւնը վերջացաւ՝ «իգամոյ» թագաւորով մը (Փրպ. 52). իսկ Բագրատունեացն՝ «առնամոյի» թագաւորով մը (Մագ. 59),